

«ԾՆՆԴԱՆՇԱՆ»

Տարիները արագ վազում են, և հայոց կյանքում էլ ավելի արագ իրադարձությունները ոչ թե իրարահաջորդում, այլ միատեղվում են հատուկ դրսևորումներով: 20-րդ հարյուրամյակի վերջահասին արդեն այնպիսի իրողություններ են ծավալում ստացել, իրենց հետագծով այնպիսի խոր ցնցումներով հագեցել, որոնք վերելքի հետ և կորուստների համադրությունն են բերել: Ազգային պետականության նորովի ստեղծումը, նրա դժվարագույն շարժընթացը, ազատագրական պայքարին անձնագույն նվիրվածությունը, բայց և միաժամանակ հարամա երկատվածության և երկփեղկվածության զգացողությունն իրենց անդրադարձումն են ստանում նույն այդ պահի մեջ: Դրա դեռևս նորագույն դրսևորմամբ՝ վաղն անպայմանորեն հայրենիքից արտագաղթածն ու նրա զավակը խոսքային իրենց նոր երգը կբերեն գրականություն՝ առայժմ սահմանափակվելով դրա մեղեդիավոր արտահայտմամբ, կարոտի և հուշերի հուզախառն հագեցումով, որ դեռևս հնչում է ... հայերեն:

Տեղաշարժի այդ երևույթը մշտապես իր շրջապատույտն է անում՝ հիմնավոր կամ անհիմն շարժառիթներից գալով, բայց այնուհանդերձ, անում է իր պտույտը՝ կենսավորելով ու սնուցելով մի այնպիսի գրականություն, որ արտերկրային է՝ այդ անսահման բովանդակային նոր իրլրացումներն ունենալով:

Նորաբնակ արտերկրացի դարձած հայն առայժմ թարմ հուշերի պաշարի գերակշռությունն է պահպանում իր մեջ, իսկ նա, որ արդեն սփյուռքահայ է վաղուց-անտի, որ իր մեջ կրել է սերունդներով փոխանցված չխամրող զգացական աշխարհը, նա գրականություն է բերում ոչ միայն իր ընթացիկ կյանքի գեղարվեստական արտացոլանքը, այլև իր նախնիների, իր երեցների հաղորդական ներկայությունը: Միայն այդ կերպ է, որ չի խզվում այն կապը, հոգեկան ժառանգավորության ընդոժին հակվածությունը, որ կամա-ակամա երևան է գալիս «ով եմ ես»-ի գիտակցականությամբ:

Ինքնաճանաչման ու ինքնահաստատման սփյուռքյան այդ անդադրուն միտումը ինչքան էլ օրակարգային է մնում միշտ, ժամանակը, հա-

մենայն դեպս, իր ճշգրտումներն է մտցնում դրա գեղարվեստական դրսևորման բովանդակության ու ձևակերպման մեջ:

Երևույթը համընդհանրական է, եթե նույնիսկ սահմանափակվե՞նք միայն հայ գրականության տարածքով: Ստեղծագործական ընթացքում նոր եղանակների կիրառումը ակնհայտ է ո՛չ միայն հայագիր գրականության մեջ և՛ Հայաստանում, և՛ Սփյուռքում, այլև օտարագիր գրականության պարագայում, մասնավորապես՝ բանաստեղծության առթիվ: Մտածական ու զգացմունքային հարահոսը, առարկայականի և խոհականի միաձուլումը, որտեղ պատկերի մեջ միախառնվում են, տողատվում ընկալումները, ներկայանում են կշռության բեկբեկումներով, տարածության ու ժամանակի սրընթաց հաղթահարումով:

Նման արագության ներբերումը բանաստեղծությունն իր հիմքում պահպանում է այն իրական կացության պատկերը, որը շրջապատում է, որը առօրյա է ներթափանցում հոգևոր ու նյութական իր ներգործունակությամբ: Կարծես թե այլևս հմարավոր չէ հանգիստ դիտարկել, մտորել, չափի բերել տպավորությունների, խոհերի այն հոսքը, որ խուժում է և համակում տարասեռ իր բնույթով:

Օտարագիր հայ բանաստեղծությունը (որը, ինչպես ասվեց, միայնակ չէ նորակերպման հարցում), ըստ էության, ոչ միայն հակամետ է, այլև բնականորեն դրսևորում է իրար ագուցված ընկալումների և մտորումների այդ բարդ համադրությունը: Թեկուզ այդ մի հանգամանքով իսկ ինքնահմար չէ «օտարագիր հայ բանաստեղծություն» բառակապակցությունը, հպանցիկ մի երևույթի սոսկ նշագրում, որը կարելի է մշտապես լուսանցքում թողնել: Ընդհակառակը՝ Սփյուռքի գոյատևման ջանքերի կառույցում տարեցտարի ավելի նշանակալի է դառնում այդ գրականությունը՝ սկզբի մասնակի իր դրսևորումներից հետզհետե աճելով դեպի ավելի կայուն ու հարատևող կիրառության:

Այս իրողության արձանագրման մեջ վճռող է հենց ամրապնդվող Սփյուռքը՝ իր քաջ հայտնի հանգամանքներով (ոչ հայկական կրթություն, փոխհարաբերությունների տիրող մթնոլորտ, իմացական դաշտի բազմազանություն), որոնց իրենց անդրադարձումն են ստանում գրական կերպավորման մեջ:

Հնարավոր չէ լռության մատնել կամ անտեսել այն բազմիցս հաստատագրված փաստը, թե մեծանում է օտարագիր գրողի և նրա ընթերցողի քանակությունը, որի առթիվ ակնհայտ վկայություններ են ոչ միայն երկլեզվյան դարձած պարբերականները, դրանց հրատարակիչների խոստովանությունները, այլև հենց օտար լեզվով հային դիմելու հաղորդագրությունները: Եվ այս ամենը՝ անհրաժեշտությունից թելադրված:

Արտերկրային պայմաններում գոյապահպանության ջանադրությունը հարկադրաբար նոր եղանակների է դիմում, հայաբնույթ ձեռնարկումների և հանդիսությունների կազմակերպման, նույնիսկ քաղաքական խնդիրների շահագրգռությունը բորբոքելով, որոնց կետ-նպատակին հայկականության մշտադրություն պահպանումն է:

Այս առիթով հատկանշելի է այն պարագան, որ այդ պահպանումը ոչ միայն խթան է ստանում կողմնակի ազդակներից, միջոցառումների հարուցած աշխուժությունից, այլև հենց ինքնության խորքում պահպանվող ակունքներից, գոյակերպի բաղադրության տարրերից:

Միասեռ չէ այդ տարբադրությունը, մանավանդ՝ դրա բաղադրիչների հավասարազորությունը, որը պայմանավորված է դիտարկման սկեռակետի ընտրությամբ: Սակայն բոլոր դեպքերում, ինչ էլ որ դառնում է գրական արծարծման առարկան, նա իր հերթին ներկայացնում է այն հոգեխառնությունը, որն իր հաստատուն տեղն ունի Սփյուռք ամբողջականության մեջ:

Այդ ամբողջականությունը պարզում է շարժուն մի դրություն, և դա ոչ միայն տեղափոխությունների, մեկի նվազմամբ մյուսի մեծացման ճանապարհով, այլև ինքնադրսևորման մեջ հարաճուն կիրառություն ստացող օտարլեզվյալի ծավալմամբ: Սփյուռքի հայագիր գրականությունը իր շողշողուն վերելքից հետո նոր համալրումների կարիքն է զգում, իր ընթերցող շրջանակի ընդարձակման պահանջ, որ սպասումների հետ է կապված: Այդ եմ փայփայում իրենց խոսքով ու գործով հայ գրականությանը նվիրված ու ծառայող մարդիկ: Սակայն նրանց կողքին (ինչո՞ւ չէ, նաև հենց իրենց կողմից էլ) նոր թափ է ստանում նաև օտարլեզվյալը, ի մասնավորի՝ անգլերենովը, որը պայմանավորված է ամերիկահայ գաղութի ինչպես արդեն վաղեմի, նույնպես և ընթացիկ ընդարձակմամբ:

Ըստ էության՝ օտարագիր այդ գրականության մնայուն պահպանումը, առավել ևս նրա ներքին փոխակերպվածությունն ու կյանքային նոր տարրերով հագեցվածությունը ցույց են տալիս ոչ միայն նրա հայածին հատկությունը, այլև մտածողության և ընկալումների մեջ ժամանակի վերափոխումներից եկող արտացոլումները: Այդ կերպ օտարագիր այդ գրականությունը ներկայանում է այդ երկուսի համադրումով, այսինքն՝ այդ գրականությունը ներառում է և՛ իր ակունքների զգացողությունը, և՛ ժամանակից եկող տպավորություններն ու խոհերը: Այդ միախառնումը մի նոր աստիճանի է բարձրացնում օտարագիր բանաստեղծությունը: Ունենալով ազգային նախահիմք՝ նա իր պարունակում արծարծում է առկա իրականության բազմազան երևույթներ ևս: (Մի՞թե այդպիսին չէ

նաև հայագիր բանաստեղծությունը ներկա իր առանձին դրսևորումների մեջ՝ «Երիտասարդական», «մոդեռն» կոչված մասնավորումով):

Իսկ այդ միախառնումը ընթանում է նաև նորակերպ եղանակների կիրառմամբ, եղանակներ, որոնք ակնհայտորեն տարբերվում են նախկինում իրենց ճանաչումն ունեցածներից: Ըստ այնմ՝ եթե օտարագիր բանաստեղծությունը սկզբնապես հակված էր պատմական ու պատմություն դարձած, առարկայականորեն ներկայացող երևույթների ու հասկացությունների, դրանց անմիջական հաղորդականությանը, ապա նորագույն իր դրսևորման մեջ նա առավելապես դիմում է այլաբանությունների՝ փոխաբերությունների և փոխանունությունների, բազմիմաստ խորհրդանշանների, գերիրապաշտ համակցությունների:

Նման եղանակը բնավ էլ նորաբանական մի մարմաջ չէ, այլ խստորեն պայմանավորվում է այն զուգադրմամբ, որտեղ միաձուլվում են խոհականն ու զգայականը՝ հոգեբանական բարդ մի կառույց մարմնացնելով:

Այդ բարդության հիմքում իրականության հետագիծը կա՝ սփյուռքյան գոյավիճակի դրսևորումն իր հառաջացած երեսարկումով:

Զափազանց բազմազան ու բազմաբնույթ է այդ երեսարկումը, գրական տարբեր սեռերով ու տեսակներով արտահայտվածությունը: Իսկ տվյալ դեպքում, մասնավորելով Սփյուռքի օտարագիր բանաստեղծության շարունակվող երևույթի անդրադարձումը, անխուսափելիորեն սևեռակետում է մնում ամերիկահայ օտարագիրը: Եվ դա ոչ միայն զաղուքի հարաբերականորեն վաղեմության, սերնդափոխության ընթացքում ունեցած ներքին վերափոխումների, այլև, նախ՝ մշտապես նորանոր համալրում ստանալու, և երկրորդ՝ իր համադրական բնույթով լավագույնս օտարագիր բանաստեղծության ընդհանրական պատկերը ներկայացնելու պատճառով:

Այդ առումով խիստ ուշագրավ է «Ծննդանշան»-ը, որ ենթախորագրվել է՝ «Ամերիկահայ անգլիագիր բանաստեղծության երկլեզու ժողովածու»¹: Բանաստեղծությունները գրվել են անգլերեն, որոնք թարգմանաբար ներկայացվել են կամ արևմտահայերեն, կամ արևելահայերեն, այսինքն՝ լեզվական մի այնպիսի համատեղում, որն ըստ էության հեռու է ներփակ մի իրողություն լինելուց:

Ժողովածուն ինքնին խոսուն վկայություն է այն հառաջացող երևույթի, որն անկասելիորեն ծավալվում է սփյուռքահայ գրական կյանքում: Հենց վերնագրային ցուցանիշը, հանդես եկողների կազմն ու միահավաքման պարագաները, տեղի ընտրությունը նույնպես, այս ամենը գալիս են սոսկ փաստի արձանագրումից վերածվելու խորքային բացահայտումների:

Սկսած դեռևս վերնագրից՝ «Ծննդանշան», արդեն իսկ հղում կա դեպի ակունքները, արմատները, որոնք կենսավորել են, իրենց նշանն են դաջել ստեղծվողի կերտվածքի վրա: Այդ նշանը թեև ընդհանրական է իր բնույթով, հենց իրենով իսկ պայմանավորող, բայց նա բաղադրություն է հանդիսանում՝ բաղկացած տարբեր միավորներից, գունեղանգների զանազանությունից, որոնք յուրովի իրենց հավելումներն են բերում ամբողջականությանը:

Իսկ այդ ամբողջականության հավաք տեղանքի ընտրությունն էլ գալիս է իր արդարացումը, հիմնավորումը ամրապնդելու անվան իսկ հիշատակությամբ՝ Գլենդել, կալիֆորնիական այդ հայափոփ քաղաքը, որն իր բարքերի ու սովորությունների, լեզվական խառը պահվածքի, հրահրվող ձեռնարկումների աշխուժությամբ ցուցանիշային է Սփյուռքի այժմյան համապատկերի համար: Ըստ այնմ՝ «Ծննդանշանի» երևման հանգամանքներն ու իր իսկ բովանդակությունը առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում:

Դեռևս ժողովածուի «Նախաբանում» (հեղինակ՝ Գուրգեն Արզումանյան) արդեն իսկ արձանագրվում է բազմաքանակ գրողական կազմի առկայության մասին, որը պարբերաբար իր բանաստեղծության ունկնդրության է բերում ընթերցողին: Այս ճանապարհով հաղորդվածությունը ինքնին նշանակալից է նրանով, որ փոխըմբռնվածության մթնոլորտ է ստեղծում: «Այս ժողովածուն, — ասվում է՝ պարզելով լայն ընդունելության երկկողմանի միտվածությունը, — կարող էր ծավալվել և ընդգրկել քսանից երեսուն երիտասարդ հեղինակների ստեղծագործությունները, որոնք ասնունքի երեկոներով և հրատարակություններով ներկայություն են ամերիկյան և ամերիկահայ իրականության մեջ, սակայն սահմանափակվեցին 1996-ից մինչև 1998 թվականները Գլենդելի Հանրային գրադարանի հովանավորության արժանացած «Բազ Նամակ»-ի կազմակերպած ցերեկույթներին մասնակցող այն հեղինակների մի մասով, որոնք ընթերցած բանաստեղծությունները նպատակահարմար էին այս ժողովածուի համար»:

Թեկուզ մասնակի ընդգրկվածությամբ՝ այդ ժողովածուն շարունակվող դրսերևույթի մի նորագույն համադրությունն է՝ նախկին այս ու այնտեղ առկայծող օտարագիր բանաստեղծության իր սերտ աղերսակցությամբ: Այստեղ ի մի են եկել այն էական, հարատևող ընկալումները, որոնք մշտապես համակում են օտար լեզվով, բայց հայ իզոլվ գրողին:

Այս նախապայմանի առկայության, առավել ևս՝ ինքնաբերույ ապրումների և մտորումների, իրականության արտացոլանքների մեջ «Ծննդանշանն» արդեն իր շրջագծում ներառում է այնպիսի պարագաներ, հոգեխառնության այնպիսի բաղադրամասեր, որոնք՝ մեկուսի կամ

ընդելուզված, սփյուռքյան գոյակերպի, մտածական աշխարհի ալեբա-
խումներն են բերում: Եվ ժողովածուն իր նյութերով հնարավորություն է
ընձեռում՝ «...թափանցել ամերիկահայ անգլիագիր այս սերունդի ստեղ-
ծագործության խորքերը և ըմբռնել հոգեբանական ու ընկերային այն
խնդիրներն ու խնդիրներին մոտեցման ձևերը, որ այս սերունդը ցուցա-
բերում է բանաստեղծությամբ: Թեև քիչ չեն նրանք, որ հազիվ ծնված,
արևելյան մի քանի շող իրենց ենթագիտակցության մեջ, փոխադրվել են
արևմուտք, և այդ պատճառով, նաև բանաստեղծելու շնորհիվ կրում են
կրկնակ Ծննդանշան»:

Դիպուկ է «կրկնակ» հատկանշումը, որը, սակայն, կարող է վերաբե-
րել ոչ միայն արևելքից արևմուտք տեղաշարժին որպես հետևանք, այլև
հենց արևմուտքի մեջ ծլարծակվելուն: Այդ է հաստատում ժողովածուն
իր ընդգրկած բանաստեղծների կազմով, որտեղ արևելածիններ են
Բաղդադից, Հալեպից ու Բեյրութից եկածները, ապա նրանց կողքին են
նաև ամերիկածինները Մասաչուսեթսից, Սան Ֆրանցիսկոյից, Լոս Անջե-
լեսից, Նյու Յորքից:

Այս համախմբումը թեև տեղանշանային իր նրբերանգներն է պահ-
պանում, բայց և այնպես հանդես է գալիս մի ընդհանրական դիմա-
գծությամբ, որին հնարավոր է հետամուտ լինել տիրապետող իր ցուցա-
նիշներով:

Այսպես՝ լոսանջելեսցի Սիլվա Տաքեսյանը իր բանաստեղծության
մեջ, ներանձնավորելով սփյուռքյան վիճակի հասած հայի կենսահաս-
տատության հատկությունը, պարզում է.

Մոլախոտ եմ:

Նետեցեք ինձ որևէ տեղ և ես կաճեմ

և կաճեմ մայթի բետոնին

կամ ամուլ ծյունին անտարբեր: Կսպասեմ

գլորվելու դեպի մանր մի ճեղք

որը պահում է տիղմը կյանքի

կամ կհամբերեմ

հալոցքին, սառույցի հաստատմանը,

գետնի սառցահալքին

որ ինձ իր գիրկը կառնի:

Փորե՛ք ինձ ինչքան կուզեք,

տրորեք իմ տերևներն ու ցողունը

արմատներս դրանից ավելի խորն են:

Ընդգծելի է «դրանից»-ը, որը իմաստային էական մի գիծ, հարա-
մնայության գաղափարն է անսահմանության հասցնում՝ նույնքան ան-

պարագրելի ընդունելով տարածությունը: Ըստ այնմ՝ եթե այդ մի բառի մեջ ամփոփվում է ժողովրդի դժվարին ուղու գծագրությունը, ապա դրան անմիջապես զուգադրվում է որպես հակադրություն է՛լ ավելի պնդացած, ամրակայված ու կոփված լինելը, ինչպես նմանատիպ պարագայի մասին այլ կերպ ասվել էր, թե մեզ սեղմելուն որպես հակադրություն ստացվեց, որ «...մենք ստիպված...ադամա՛նդ դառնանք»:

Ազգային ինքնաբնութագրմանը նվիրված հայերեն ու անգլերեն այս ստեղծագործությունները, դրանց գովաբանական համանման հագեցվածությունը հիմնավորման հարուստ իրենց կռվանն ունեն, որոնք ինքը՝ պատմությունն է վավերացրել՝ իր հաստատագրումը հասցնելով մինչև մեր օրերը: Չկա մի ասպարեզ, և դա տվյալ դեպքում մասնավորելով Սփյուռքի վերաբերյալ, որտեղ հայն իր իմացական, գործառական ու բարձրաթիչ ունակություններով չունենա իր լայն ճանաչումը: Ժամանակի նրա զգացողությունը միշտ էլ ճիշտ հունով է ընթացել՝ ելակետում ունենալով ազնիվը, արդարը, գեղեցիկը, թեև նյութապաշտ ու անիրավ աշխարհն իր ձևական կանոններով ղեկավարվում է օգտապաշտական սկզբունքներով: Այս պայմաններում էական իր ներկայությունն է բերում նաև օտարագիր բանաստեղծությունը՝ սերունդների կապի բացահայտման միջոցով, կենսափորձի և դրա իմաստասիրական հետևությունների ճանաչողականությամբ: Այդ կերպ առօրյա երևույթների հորձանքում կողմնորոշվելու, հոգեկան նեցուկ ունենալու անհրաժեշտությունը վերջին հաշվով հանգում է շարունակականության այն հիմքի ամրացման, որ կարողանում է դիմակայել ժամանակին: Այդ մտայնության արտահայտությունն է մասաչուսեթցի Նենսի Ագաբյանի բանաստեղծությունը, որտեղ՝

Մեծ մայրս կըսեր

մի հավատար այն մարդոց

որոնք բարակ շրթներ ունին անոնք

կծծի են և ապա ան

հոնքերը կը պոստեր թատերականորեն:

Բայց անշուշտ պետք է հավատամ

մեծ մորս ըսածներուն

ան Մեծ ՄԱՅՐՍ է

հին երկրեն...

Նորագույն օտարագիր բանաստեղծությունն աչքի է ընկնում պարզի, հասարակի, առօրեականության արտաքինի տակ ներամփոփված իմաստային ու գաղափարական այնպիսի խորքով, որ վերաճում է լայն ընդհանրացումների տանող հետևությունների: Այդտեղ չկան բարձրա-

գոչ արտահայտություններ, ազգայնական խոստովանություններ, բայց իրենց էության մեջ պահպանում են հոգեկան կերտվածքի այն տարրերը, որոնք ջերմացել են ընտանեկան կենցաղային հարազատ մթնոլորտից: Թեկուզ միշտ չէ, որ այդ մթնոլորտն իր իրական, անմիջական հողն ունի, բայց նույնիսկ այդ պարագայում չի մեռնում ժառանգված զգացողությունը, երազական այն կացությունը, որը սփոփաբար իր հատկությունն է հաղորդում մշտապես: Եվ այդ զգացողությունն այնքան խորն է, որ եթե ոչ բացարձակապես, ապա հարաբերական ուժգնությամբ ձերբազատվում է անցյալի մռայլից, մեր պատմությանն ուղեկցող չարաղետ ու չարաբեր հիշատակներից:

Այդ առումով ուշագրավ են Արա Պապայանի բանաստեղծությունները, որոնց մեջ դիտակետը թեև փոփոխություններ է կրում, այլաբանություններով են ներկայացվում երևույթներն ու դրանց իմացական ընկալումները, բայց այդ բոլոր դեպքերում անշեղորեն պահպանվում են ազգային օրախնդիր արժարժումները:

Յեղիմակը դեռևս հինգ տարեկան հասակում Բաղդադից տարվել է Լոս Անջելես, և անգլիագիր իր բանաստեղծությունները միջոց են դարձել ինքնաբացահայտման համար, ինչպես ինքն է ասում՝ «բառերս — և բանաստեղծության մեջ կքննեմ, կվերաքննեմ կյանքս և կգտնեմ ուրիշ իմաստներ, որ այլապես կրնայի անտեսել»: Բանաստեղծության պարտադրող իմաստային հագեցվածությունը նրա մոտ գտնում է նոր ձևեր, որոնք իրենց յուրօրինակությամբ ոչ միայն հետաքրքրություն են շարժում, այլև ճանաչողական, մեկնաբանությունների տանող պարարտ հող են ստեղծում: Այդպիսին է «Մյուս երեսը» բանաստեղծությունը, որտեղ՝

Այսօր կխորհիմ

Պատմության քնքույշ բազուկներու և

Ո՛չ արյունալի ջարդերու կամ աշխարհակալներու մասին:

Այսօր կխորհիմ

Գեղջկուհիի մը մասին,

Որ հաց կեփե,

Այնքան փափուկ, որ կուգեմ

Գլուխս հանգչեցնել

Խմորին վրա

Եվ ձգել որ իր տաքությամբ

Ջերմացնե զիս:

Նույն այս կերպ Պապայանի «Քարերը», «Լերկ ձևեր» բանաստեղծությունները հագեցած են երևութականից շատ ավելի տարողունակ ի-

մաստային խորքով, մտահանգումների տանող խորհրդանիշերի արտացոլմամբ:

Եղեռնապատումը հայ գրականության չխամրող նյութերից է, որի արժարժումը նշանակալի փոփոխություններ է ստացել օտարագիր բանաստեղծության մեջ: Այդպիսին է Սևանա Բաղդասարյանի «Առավոտյան պտույտ» բանաստեղծությունը, որտեղ հակադրությունների միջոցով տրված է դառն ճշմարտությունների իրական պատկերը:

Ուշագրավ է այն, որ Սևանան սանֆրանցիսկոյի է, և այդ սոսկ առումների մեջ իսկ միախառնվում են հայության յուրակերպ բևեռացումները՝ Սան Ֆրանցիսկո և ... Սևանա:

Բանաստեղծությունը, որտեղ մեկուկես միլիոնի վերաբերյալ հարցումներ են ուղղված թուրք կոմունիստին, իր ծավալուն ընդգրկման մեջ նույն հարթության վրա է տեսնում անցյալն ու ներկան՝ այդ կերպ դրանց անխզելիությունը նշելով: Այդպես է, որ հայ նպարավաճառներով լեցուն քաղաքում, հասուն ծիրան բուրող շունչով և պղատոնական սիրով «բարև» են ասում մանուկները («who openly say <parev> with the breath...»), իսկ նրանց նույն այդ միջավայրում տիկին Քերոբյանը, որ Սև ծովի ափերից է հասել այդտեղ, իր տան գավիթում կարմիր, կապույտ, նարնջագույն դուլյերի մեջ ծաղիկներ է աճեցնում՝

120 տարեկան քույրերու հիշատակին, որոնք կգրուցեն հիմա
ծովուն հատակը միրհող նավերու մեջ:

Սուրճի գավաթներ կանվանե

անոնց հատակը կան բախտի սև արտեր

Սիփան, Տարոն և Վան,

Նույնիսկ եթե չկա Սիփան մը, Տարոն մը, կամ Վան մը:

«Երագի մո մեջ գիս այգեյեզին,

Եկան կոռովներով, լի կանանց

թաթիչավոր նուշերով: Սևեռեզին, կառմրաթաթախ,

ընդլայնված քիբեռ, և խնդրեզին ող իռենգ աթերո մաքրեն»:

Մեկնություններն այստեղ ավելորդ են: Հնարավոր չէ մոռանալ ու մոռացնել, լռել ու լռեցնել, տեսնել ու չտեսնել այն, որ աստանդական է դարձել ժողովուրդը, որ կորուստներ է ունեցել նա, որ երազում իսկ կենդանիորեն հաղորդվում է վաղուց հեռացածների հետ՝ տարվետարի գումարելով նրանց բացակայության ժամանակահատվածը: Ստեղծված իրադրության մեջ տեղին են Սևանայի պատասխան ակնկալող հարցումները՝ «Իրարու ձե՞ռք թոթվենք: Հատուցումեն՞ր ընենք», որոնք արձագանքվում են, ինչպես անապատում: Սակայն բոլոր դեպքերում այդ հարցումները պահպանում են իրենց խորարմատ բնույթը, որովհետև

«Գրչածայր մը չի կրնար քուած մը ըլլալ»: Ըստ այնմ՝ բացարձակ է մնում Սևանայի եզրահանգումը, թե

այն, որ հոռո չէ հեռկած
հոռւ որ չի կրնար գայն սիրել:

Ազնիվ մի հետևություն, որ, պիտի ասել, իր հաստատումն ունի նաև արդի մեր անհանգիստ ժամանակներում:

Սևանան այցելել է Հայաստան, իր տպավորությունների չափածո մի էջն է զարդարել Մաշտոցի պողոտայի մեխակներից («Մեխակներ Մաշտոց փողոցի վրա, Երևան, Հայաստան, հուլիս, 1991»), իսկ «Ճամբորդության նման» քառահատված բանաստեղծության մեջ բազմազիծ զուգահեռներով, համադրումներով հույզն ու մտորումը իրար առաջ են մղում՝ փոխադարձ ներթափանցումներով: Այդտեղ սփյուռքահայի թափառիկ կյանքի արտացոլումն է: Որքա՞ն ճամփաներ է փնտրում, անցնում հայը՝ նաև վերջին շրջանում մի նոր ուժգնություն ստացած հարցի առաջ կանգնելով, որ իր հերթին Սևանան է տալիս իր բանաստեղծության մեջ.

Կկարծե՞ս ուրիշ տեղ ավելի լավ է:

Կամովին կամ հարկադրյալ այդ ցրվածության մեջ ոչ միայն հիշատակի, հիշողության պահպանումը կարող են ապավեն լինել, այլև հենց լեզվի մեջ մեխված, նույնիսկ օտարագիր դրսևորման պայմաններում ենթագիտակցության մեջ նստած այն հասկացությունները, որոնք ինքնության իրենց վկայագիրն են տալիս:

Այս համոզման յուրահատուկ մի արտացոլումն է ներկայացնում Սևանան տվյալ բանաստեղծության մեջ, որից մի մեջբերում ենք կատարում դրա երկլեզվյան զուգահեռներով՝ հեղինակի նաև գրելաոճի մասին որոշ պատկերացում հաղորդելու նպատակով: Եվ այսպես՝

Բնագիրը.

Hoor. Hoori. Hogh. Hoojs,
ghosts we are accustomed to.
Goojs. Goroosd. Garod. Goojs,
cave we are born from.

Թարգմանությունը.

Հուր. Հուրի. Հող. Հույս,
ոգիներ որոնց վարժված ենք :
Կույր: Կորուստ: Կարոտ: Կույս,
նկուղներ որոնցն են ծնած ենք:

Բառեր վերջակետված, որոնք պատահական կամ սոսկ հերով սկզբնավորվելով չեն, որ շարահատվել են, այլ հայ լինելության բազմերանգության, կենսությունը լիացնող տարրերի իրենց ընտրելիությամբ:

Օտարագիր հայ բանաստեղծության մեջ նման եղանակի կիրառումը յուրահատկություններ է հաղորդում եղեռնի արժարժումներին՝ միշտ մի նոր տեսանկյան տակ բացահայտելով դրա հետագիծը, ամնոռաց հիշողությունը, չսպիացող վերքը: Այս մի հանգամանքը ևս խոսում է նրա հայածին ծննդաբանության, բայց մանավանդ նրա ոգին հատկանշող տարրերի մասին: Այդ կարելի է տեսնել նաև նյույորքցի թինա Տեմիրձյանի «Նարինջներ Վոսիորից» բանաստեղծության մեջ, որտեղ հեղինակը իր եսի մեջ է տարբադարձել պատմություն, հիշատակ, ինքնության գիտակցություն, ազգային պարտավորվածություն: Նման համադրման պահերից մեկն է այն, որտեղ՝

... տեսնում եմ մի ծեր կին
իմ բուր մեծ մայրերը
հիշեցնող և բուր նրանց աչքերը տխուր
սևեռած ինձ վրա, մայրում են հեռանալս
իրենց ծննդավայրից
հուսալով մի մասունք առնեմ հետս
որ հիշեմ երբ ծերանամ:

Օտարագիր բանաստեղծությունը հարուստ է իր ընդգրկած նյութերով, որտեղ կան ոչ միայն ընթացիկ, առօրեական երևույթներից ածանցվող վերացարկումներ, բարեկեցության հասնելու հախուռն դրսևորումներ (Սիլվա Տաքեսյանի «Այ», «Հավանական է»), տեխնիկայի դարի և մարդու պառակտվածությունը, հոգեղենի գերապատվումը նյութեղենի հարաբերությամբ (Նենսի Ագաբյանը իր «Մսեղեն երեխան կգրկե...» հակադրումով, «Հիվանդ պատկերասփռումի օրվա...» սեռի անվարագույր զգաստացուցիչ բացահայտումով): Դրանց կողքին տեղ են գտել իրադարձությունների արժագանքներ (Շահեն Մանկրյանի «1967»-ը), խոհական մտորումներ (Ալեք Էքմեքճի, Արա Պապայան), որոնք արժարժվում են օտարագիր հայ բանաստեղծությամբ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Birthmark. A bilingual anthology of Armenian-American poetry. Published by «Open Leher», Glendale, California.

Ծննդանշան. Ամերիկահայ անգլիագիր բանաստեղծության երկլեզու ժողովածու: